ՎԱՏԻԿԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ ԿԱՄ ՍՈՒԼԹԱՆՇԱՀ ԱՄԻՐԲԵԳՅԱՆԸ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ *)

(Երկու էջ Հայաստանի քաղաքական պատմությունից 16-րդ դարում)

Դառն և դժնդակ քաղաքական վիճակ էր ապրում Հայաստանը 16-րդ դարում։ Օսմանյան սուլթանների և Իրանի շահերի հարատև ռազմական բախումները Հայաստանի համար և Հայաստանի հողի վրա արյունաքամ էին արել հուր ու սրից, սովից և «մահ տարաժամից» մի կերպ ճողոպրած աշխատավոր բնակչությանը։ Արարատյան դաշտը, մանավանդ Արաքսի հովիտը, դարձել էր անմարդաբնակ և անապատ, ժողովրդական զանգվածները կամավոր կամ բռնի կերպով տեղահանվել էին դեպի հեռու հորիզոններ։ Ժամանակի մի տաղասաց՝ Թադեոս Սեբաստացի, ականատես այս անցուդարձին, ահա ինչպիսի տողեր է գրում.

«...Վա՛յ մեր ազգին Հայոց բազումք
զմեզ կոխեցին,
Մեր փառքն ի մեզնէ առին, մեր տունէն
հանեալ վարեցին.

---

*) *Վատիկանի և անձնապես պապերի կրոնամոլ և հոգևոր բռնակալական քաղաքականությունը հայտնի է ամենքին։*

Մեղքերի թողության ամսականներ վաճառող և ինկվիզիցիաներ կազմակերպող կաթոլիկ եկեղեցու գերագույն պետերի անուններն իսկ սարսափ էին տարածում միջին դարերում։ Հայտնի է նույնպես, որ Վատիկանի հոգևոր գործակալները, ճիսուսյան կամ ճիզվիտ *կոչվող աբբանյակները, որպես «առաքյալներ» աշխարհե աշխարհ շրջելով, «լույս հավատի» կոչեր էին անում բոլոր «մոլորվածներին» և «հերետիկոսներին»։ Քանի քանի անգամներ Հռոմի քահանայապետները առանձին պաշտոնական թղթերով դիմել են Հայոց եպիսկոպոսապետներին ընդունել կաթոլիկ եկեղեցու գերիշխանությունը, իրենց հետ դառնալ «մի հոտ, մի հովիվ», բայց միշտ էլ մերժում են ստացել։ Իրենք իրենց Քրիստոսի փոխանորդ համարող այդ «Նորին սրբությունները» իբր թե մտահոգված են բովանդակ հայ ժողովրդի հոգու փրկության համար, բայց նրանք և ոչ մի անգամ ձայն չեն բարձրացրել անցյալներում, համիդյան օրերին, նույն այդ ժողովրդի կրած անլուր սարսափների հանդեպ։ Նրանք նույնիսկ իտալական և ֆրանսիական կառավարությունների միջոցով հրահանգներ են ուղարկել Կոստանդնուպոլիս այդ պետությունների դեսպաններին, որ վերջիններս իրենց պաշտպանության և խնամքի տակ առնեն* միայն կաթոլիկ հայերին. *Սա մի հրեշավոր միջոց էր, որ սուլթանական սարսափներից ու կոտորածներից ազատ մնալու համար լուսավորչական և բողոքական հայերը ստիպված լինեն մտնելու կաթոլիկ եկեղեցու ծոցը։*

Մեր ներկա հոդվածը դարձյալ մի նմուշ է Հռոմի պապերի նենգավոր ոտնձգությունների հանդեպ Հայոց ազգային եկեղեցու։

(Ծանոթ. հեղինակի)։

Ձերկիրն Հայոց ազգին Թաթար ազգն
աւերեցին,
Վանայ մինչև Երզնկան չինութիւն
ընաւ չթողին,
Շատ վանք և եկեղեցիք ի հիմանց
խախտեալ փլուցին,
Բազում գիրք ու աստուածաշունչք
զայն ամէնն առեալ գերեցին.
Շատ բերդ ու քաղաք առին, շատ
երկիր հրով այրեցին,
Կացինն ի ձեռուին առին՝ բոյս ու
տունկ զամէն կտրեցին...
Ցակոր քաջ րաբունապետն երեսուն
հոգուով սպանեցին...
Եղուկ ու վայ մեր անձանցս՝ զոր աչօք
մերովք զայս տեսանք,
Ողորմ ողբալի եղաք, հայրենեաց
մերոց զրկեցաք»...[1]):

Հայրենի քաղաքական որևէ իշխանություն գոյություն չուներ այլևս, նույնիսկ Հայաստան չկար փաստորեն, նա մնացել էր լոկ աշխարհագրական տերմին: Իր «թշվառ հոտի» պաշտպանությունն ու սփոփումը հանձն էր առել Հայոց եկեղեցին: Այն ժամանակից, մանավանդ, երբ կաթողիկոսական Աթոռը Կիլիկիայից տեղափոխվել էր Էջմիածին (1441), Հայոց Հայրապետության հմայքը բարձրացել էր ուրիշ որևէ տեղից փրկություն ստանալու հույսը կորցրած ժողովրդի աչքում: Եվ այդ անմխիթար վիճակում կաթողիկոսները մնացել էին ազգության միակ ներկայացուցիչներն ու պաշտպանները սուլթանների և շահերի արքունիքներում: Երկրի այսպիսի ծանր կացության մեջ, կուլտուրական կյանքի համատարած խավարի մեջ, Էջմիածնի կաթողիկոսները իրենց աչքերը հառել էին դեպի արևմտյան Եվրոպա, «քրիստոնյա և մարդասեր» պետություններին, նրանցից օգնություն ստանալու սին հույսերով: Ահա այդ ժամանակից էլ սկսվում է Հայաստանի վերջին դարերի պատմության մեջ արևմտյան օրիենտացիան, որ տևեց գրեթե մինչև Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիան և մեծամեծ չարիքների պատճառ դարձավ Հայաստանի և հայ ժողովրդի համար:

Անցյալ դարի 70-ական թվականներին մի հուսախաբ բանաստեղծ երգում էր՝

«Ի՞նչ կխաբուիք անդադար,
Արքայատանց կը յուսայք օգնութիւն,
Ձեզ կծաղրէ մերկութիւն...»:

Եվրոպայի «քրիստոնյա» պետությունների օգնությամբ հայրենի բնաշխարհը և ժողովրդին մահմեդական լծից ազատելու գաղափարը առաջին անգամ իր մեջ փայփայում է Ստեփաննոս Ե. Սալմաստեցի կաթողիկոսը (1545—67): Իր երիտասարդական տարիներին Եվրոպայում շրջագայած, Կ. Պոլսում տարիներ ապրած «իմաստուն եկեղեցական, հմուտ օտար լեզուներու, մասնավորապես լատիներենի և պարսկերենի և հեղինակ կրոնական գրվածներու», նա որոշում է ինքը անձամբ գնալ Եվրոպա այդ ուղղությամբ դիմումներ անելու արքունիքներին և մեծ իշխաններին: 1547-ին Ստեփաննոս Սալմաստեցին աթոռակից կաթողիկոս է կարգում Միքայել Սեբաստացուն և Վաղարշապատից ճանապարհ ընկնում դեպի Կ. Պոլիս: Հասնելով օսմանյան կայսրության մայրաքաղաքը, նա լավ ընդունելություն է հանդիպում Աստվածատուր պատրիարքի կողմից, ապա պատրաստություններ տեսնելով նավ է նստում դեպի Ադրիատիքի ափերը, ամենից առաջ դիմելու Վենետիկի հանրապետության նախագահին: Վենետիկում նա նախապես նրան ներկայացնում է հայերի աղերսը, որի մեջ խնդրում էին գալ և իրենց ազատել «այլազգիների խիստ տառապանքներից»: Ապա նա ստանում է Իրանի հայերի կողմից մի գրություն, որի մեջ Ստեփաննոսին համարելով իրենց ներկայացուցիչը գրում են՝ «կը սպասեմք ձեր գալուն, հաստատված լինելով, որ ի զգօնութենէ տերանց վենետաց պիտի տեսնինք մեր փրկութիւն և ազատութիւն (Ալիշան, Հայ. Վենետ. 329):

1) Ալիշան, «Հայապատում», էջ 595:

Թե որևէ բան շահե՞լ է Հայոց կաթողիկոսը Վենետիկում, հայտնի չէ, բայց նրան շրջապատող այնտեղի «հայ խոջաները» խորհուրդ են տվել նրան գնալ Հռոմ։

«Որոշած են պապին ալ դիմում ըլլա», —գրում է Օրմանյանը,—վասն զի այն ատեն Հռոմ ոչ միայն Եվրոպիո գլխավոր արքունիքներեն մինն էր, այլ և կրոնական կերպարանքով դերագույն դիրք մը ստացած էր։ Մյուս արքունիքներն ալ կրոնամոլ ձգտումներ ունեին և իրենց դավանութենե դուրս եղողներուն համար թե ոչ հակառակ գոնե անտարբեր էին, և Հռոմի պապին հանձնարարություն մը մեծ նշանակություն ուներ անոնց համեմատ ըլլալու» (Օրմանյան, Ազգապ. 2241)։

Ստեփաննոսը մեկնում է Հռոմ (1549) և այնտեղ մնում ավելի քան վեց ամիս. ինչո՞ւ այդքան երկար միջոց, հայտնի չէ։ Կաթողիկոսին շատ է օգնել Եթոպացի Տեր-Պետրոսը, որին նա ձեռնադրել է եպիսկոպոս և տվել նրան մի թուղթ 1549-ին սեպտեմբերի 6-ին, «ի կայսերանիստ և ի մայրաքաղաքն մեծ Հռոմ»։ Այդ թղթի մեջ Սալմաստեցին գրում է, որ «իմ բանի հոգացողն հապաշ Տէր-Պետրոսն էր, զփափուն տեսնուլ, մեծամեծաց երթալն և դայլ ամենայն ծառայութիւնս մահու չափ աշխատեցաւ մեզ համար, ինքն և յիւր միաբանքն»։ (Հայապ. 593)։

Թե Հռոմի փափաքն՝ Պողոս III-ը ու մեծամեծները ինչ են խոստացել Հայոց կաթողիկոսին, հայտնի չէ, բայց Մեք. Վ. Զամչյանի ասելով «եցոյց Ստեփաննոս հպատակութիւն իւր զոր ունէր առ սրբազան պապն և զմիաձայնութիւն ի բանս հաւատոյ» (Զամչ. Գ. 518)։

1550-ին Ստեփաննոս Սալմաստեցին Իտալիայից հույսը կտրած գնում է Գերմանիա և նույն աղերսանքները ներկայացնում կարլոս V-ին, բայց այդ ժամանակ Լութերի վարդապետության տարածման հետևանքով երկրի մեջ տիրում էին ներքին խռովություններ և Հայոց կաթողիկոսը պետք եղած ուշադրությանը չի արժանանում, նա անցնում է Լեհաստան՝ տեսնելու Սիգիզմունդ Երկրորդին, բայց ոչ մի պատմական վկայություն չկա գործի հաջող ընթացքի մասին։ Վերջում նա գալիս հասնում է «Մոսկովստան», դուցե Իոհան ահեղին տեսնելու հուսով, ապա Ղրիմի վրայով դառնում է Անդրկովկաս և Էջմիածին հասնում 1551 թվին։

Ստեփաննոս Սալմաստեցու ձեռնունայն վերադարձից հետո նման քաղաքական նպատակներով 1562 թվին իր հայրենի Սեբաստիա քաղաքն է մեկնում Միքայել կաթողիկոսը, որ այնտեղից ավելի հեշտությամբ կարողանա հարաբերության մեջ մտնել Եվրոպայի հետ։ Սեբաստացու նախագահությամբ տեղի է ունենում մի հատուկ ժողով (անկախած դաղտնի) մասնակցությամբ «բազում եպիսկոպոսաց և երիցանց և վարթամանց և իմաստնոց հանճարաց»։ Բարձր հոգևորականների, վարթամների և իմաստուն հանճարների այդ ժողովում որոշվում է պատգամավորություն ուղարկել Հռոմ, պապի միջնորդությամբ եվրոպական պետություններին աղերսելու ազատագրելու հայությունը պարս-թուրքական ավերածություններից։ Պատգամավորության ղեկավար է նշանակվում ժամանակի մի կրթված անձնավորություն՝ Ամիրբեկի որդի դպիր Աբդալ Թոքատցին (կամ Եվդոկիացին), որ հայտնի էր նաև Սաֆար անունով։

Ստեփան Սալմաստեցու ունեցած անհաջողություններից խրատված, այս ժողովականները աշխատում են ավելի ճարպիկ լինել դիվանագիտական խնդիրներում։ Նախ՝ որպեսզի պապին (Պիոս IV) կարողանան մեծ հաճույք պատճառել և լսելի դարձնել «Հայ ժողովրդի աղերսանքը», մի պաշտոնական գրությամբ «նորին սրբության» հայտնում են ժողովի որոշումը՝ իբր Հայոց և կաթոլիկ եկեղեցիների միացման պատրաստակամության մասին։ Ապա որոշում են պապին նվեր ուղարկել «ոսկի խաչ, միւռոն, մասանի օրհնեալ և Ս. Թեոդորոսի մասունք»։ Ավելի նշանավոր է այն, որ Աբդալը չի մեկնում որպես սովորական անձնավորություն, այլ նույն ժողովից և կաթողիկոսի

հաստատությամբ նրան տրվում է մի վկայական, որ այդ անձնավորությունը թագավորազն է, Սենեքերիմ Արծրունու ցեղից և ուրեմն Վատիկանը, ինչպես և Եվրոպական պետությունների պալատները, պետք է որ հաշվի առնեն այդ։ Օրմանյանը իր «Ազգապատում»-ի մեջ չկարողանալով թափանցել Սեբաստացու և նրա կազմակերպած ժողովի քաղաքական նպատակների մեջ՝ չի հավատում ժողովի օրինականությանը և բաց է անում Աբգարի թագավորազն հաստատողների կեղծիքը։

«Միքայել կաթողիկոսի նախագահությամբ օրինավոր ժողով կազմված չէ Սեբաստիո մեջ, այլ միայն կաթողիկոսի՝ Աբգարին տված վկայագրի ներքև ինք Աբգար հետզհետե նոր վկաներ ավելցուցած է և կնիքներ ժողոված է»։ Գալով Աբգարի սերունդը թագավորական ցեղից ծագած լինելուն՝ Օրմանյանն այդ համարում է «հավակնոտ թեթևամտություն» կամ «եվրոպացոց աչքին փոշի փչելու միջոց մը» (§ 1557)։

Իսկապես որ «աչքին փոշի փչելու միջոց մը». եվրոպական դիվանագիտությունը սիրում է ուրիշների աչքին փոշի փչել, ինչո՞ւ հայ դիպլոմատ կաթողիկոսն ու Սաֆար Աբգարը նույնը չպիտի անեին իրենց նպատակին հասնելու համար, որ «ընդհանուր ազգության» նպատակն էր։

Պատգամավորությունը կազմում էին Աբգար Ամիրբեկյանը, նրա որդին Սուլթան շահը և ոմն Ալեքսանդր վարդապետ՝ երևի որպես քարտուղար։ Միքայել կաթողիկոսը 1562 մայիսի 20-ի թվականը կրող երկու գրություն է հանձնում Աբգարին՝ Հռոմ, Պիոս IV պապին հանձնելու համար։

Պատվիրակության ճանապարհորդությունը մինչև Հռոմ հասնելը տևում է մոտ մեկ ու կես տարի։ Սկզբում Աբգարը Կիպրոսից մի նամակ է ուղարկում Միքայել կաթողիկոսին, որ ողջմամբ հասել են այնտեղ և շուտով նավ կնստեն առաջ շարժվելու։ Այնուհետև երկար ժամանակ պատվիրակության վիճակի մասին տեղեկություն չունենալով՝ կաթողիկոսը, որ վաղուց դարձել էր Էջմիածին, 1563 թ. ապրիլի 8-ին մի նամակ է ուղարկում Հռոմ՝ պապին իր դեսպանության մասին տեղեկություն ստանալու համար։ Այս նամակը տպագրված է Զամչյան պատմ. Գ. հատորում 520։ Եվ որպեսզի Հռոմում կարողանա ճանաչել տալ Աբգարին, գրում է, որ նա «երկու ձեռքով հաջողակ և ձախն իբրև աջ գործածող մեկն է» և որ ինքը «ոչ միայն տաճկաց», այլ առավելագույն ևս ի չարաց քրիստոնէից վախենալով, նորահնար նշանագրեր է գործածել, «զոր նա միայն կճանաչէ»։ Կաթողիկոսի գրությունը հասնում է Հռոմ։ Գտնում են Մկրտիչ անունով «Եվթովպացի կամ հնդիկ (գուցե ավելի ճիշտ լինի հնդկահայ) անձ մը», որ այդ գրությունը թարգմանում է լատիներեն և հանձնում պապին։ Պիոս IV-ը կարգադրում է ամեն կողմ փնտրել Աբգարին և նրա ուղեկիցներին, սակայն պատգամավորությունը չի գտնվում, դեռևս Հռոմ հասած չլինելու պատճառով։

Մինչ Աբգարին Հռոմում էին որոնում, նա իր մարդկանցով նավից ելնում է Վենետիկ և այնտեղ կարևոր տեսակցություններ ունենում Հանրապետության առաջավոր մարդկանց հետ։

Թոքատցին իր խմբով հասնում է Հռոմ 1564 թ. վերջերին, ներկայանում է Պիոս IV-ին և մատուցանում նրան Հայոց կաթողիկոսի գրությունները և նվերները։ «Այս ամենուն գոհունակություն կհայտնե նորին սրբությունը»—գրում է Հիշատակարանը,—«և սիրով կմեծարեն Աբգարը և անոր հետեվորդները»։ Պիոս IV առաջարկում է Աբգարին գրավոր իրեն ներկայացնել Հայոց դավանանքը։ Թոքատցին հրաժարվում է պատճառաբանելով իր անկարողությամբ, բայց պատգամավորության գործը ձախողանքի չմատնելու համար «Պապի ատենադպանաց կղկիջանի» (1563 նոյեմբ. 8)։

Աբգարի՝ պապին հանձնված գրության բուն նպատակը մի կողմ թողած Միք. Զամչյան հռոմեադավան պատմագիրը, ինչպես և հետագայում նրան հետևելով մի

քանի պատմագիրներ, մեծ նշանակություն են տալիս դավանաբանական խնդիրներին, անտես առնելով ազգային քաղաքական նը-պատակները։ Հայոց և Հռոմի եկեղեցիների մերձեցումը հայոց կաթողիկոսի և նրա պատգամավորության համար նպատակ չի եղել, այլ միջոց։ Այդ բանը պետք է, որ հասկանալի լիներ։

Պիոս IV-ը զոհ է լինում Արզարի դրությունից,—գրում են մեր աղբյուրները,—սիրաշահում է նրան զանազան պատիվներ տալով. նախ՝ Ս. Պետրոս տաճարի մոտ գտնված Ս. Լաուրենտիոս եկեղեցին իր ինչքերովը և ժամատնովը նվիրում է Հայոց, որպես հյուրանոց, ապա որդեգրում է Արզարի որդուն՝ Սուլթանշահին, նրան անվանելով Մարկանտոն, իսկ Արզարին դեպի Էջմիածին ուղեկցելու համար նշանակում է մի եպիսկոպոսի, որ կաթողիկոսին ընծաներ պետք է ներկայացներ և նրան հրավիրեր Հռոմ, որպեսզի «երես առ երես կարենան տեսնել և դարման մը խորհել վարատական հայության դարդերուն»։

Թոքատցին իր որդուն թողնելով Հռոմում, վերադառնում է Վենետիկ իր հետ ունենալով Ալեքսանդր վարդապետին և պապի նվիրակ լատին եպիսկոպոսին, որ արդեն կոչվում էր «կարդինալ հայոց»։ Արզար Ամիրբեկյանը Վենետիկում ծրագրում է ներկայանալ դոժին և այլ իշխանավորների, բայց որպեսզի պապի կողմից նշանակված «կարդինալ հայոցը» չկարողանա հետևել իր ամեն քայլին, նրան ուղարկում է Կիպրոս, որ այնտեղ սպասի մինչև որ իրենք կհասնեն։ Այդ եպիսկոպոսը Կիպրոս է հասնում և... մեռնում է. պապի կողմից Էջմիածին ուղարկվող դրությունն ու ընծաները հետ են ուղարկվում Հռոմ. «Ամենայն ինչ, զոսն չկամելոյ աստուծոյ ունայն և սնոտի եղև»։

Արզար Թոքատցին հեռանում է ոչ այնքան զոհ վիճակում, նա չի կամեցել որ կաթողիկոսը գնա Հռոմ, նույնիսկ Կիպրոսում «հայոց կարդինալ»-ի անակնկալ մահը կասկածներ է հարուցում... Ամիրբեկյանը միաժամանակ մնում է Վենետիկում, վախենում է ճանապարհ ընկնել, որովհետև լուր է առնում, թե «տաճկունք լուեալ են» իր պատգամավորության նպատակի մասին և, ուրեմն Կ. Պոլսով անցնելը իր համար դառնում է խիստ վտանգավոր։

Սակայն Արզարը գտնում է թուրք իշխանության ամեն կասկած իրենից հեռացնելու միջոցը։ Նա գիտեր, որ 1512—13 թվականներին առաջին հայերեն գրքերը տպագրվել են Վենետիկում ու այդ քաղաքում կարելի կլիներ առժամանակ նույն գործով զբաղվել, տառեր ձուլել տալ և նոր գրքեր հրատարակել։ «Եվ նա այլ հնարս ոչ կարէր առնել», գրում է իր հոր մասին Սուլթանշահը, «հնարեցաւ և տրար զպատման գրոց... նորինացն թէ վասն այս պատճառիս գնացեալ եմ ի Ֆրանկստան վասն ահի եւ երկիւղին» («Հիշատակարան» 200)։ Եվ մինչև վերջերս տիրող այն կարծիքը, թե Արզար դպիրը կաթողիկոսի կողմից Հռոմ է ուղարկվել հատկապես տպագրական գործի համար, ջրվում է, մանավանդ Սուլթանշահի նամակում մի առ մի հիշատակվում է իր հոր Հռոմ գնալու իսկական քաղաքական նպատակը։

Վենետիկում Արզարը ձուլել է տալիս հայերեն նոր տառեր և 1565-ին լույս է ընծայում առաջին հայերեն օրացույցը, որ կոչվում է «Յառնտինթուր տումարի գեղեցիկ և պիտանի» (թերթ)։ Այդ օրվանից Թոքատցին ոչ քաղաքական, այլ կուլտուրական գործիչ է, հուսախաբ Եվրոպայի խոստումներից, նա անճնատուր է լինում տպագրության գործը Հայոց մեջ տարածելու նպատակին։ Ջուղայեցի վաճառականները Վենետիկում ամեն կերպ ընդառաջ են գալիս Արզարի ձգտումներին, խոստանալով նրան նյութական «օգնականություն և ձեռնտվություն չը պլանալ» (Զարբ. 275) և ահա նույն 1565 թվին Արզարի ջանքերով տպագրվում է մի «Սաղմոսարան» կամ «Փոքրիկ մեկնիչ սաղմոսաց», որի մի օրինակը պահվում է Մխիթարի Ամբրոսիոսյան դրադարանում։ Մի օրինակ ունի նաև Երևանի Գրական Պետ. Թանգարանը։ Թոքատ-

ցու այդ հրատարակությունների մեջ տպագրված է երկու պատկեր. առաջինում՝ թե ինքը Աբգարը ինչպես է ներկայանում Պիոս IV-ին, (որին ավելի պատիվ տված լինելու համար կոչում է Պետրոս)։ Երկրորդում՝ իր ներկայանալը Վենետիկի դքսին՝ «Երեւեմոն Թուճին»։ Առաջին պատկերի մեջ Աբգարը իր որդու հետ պապին ներկայացնում է մի գլրոց իբր հայերեն տպագրական տառերի նմուշներով՝ հավանության կամ հաստատության համար։ Այստեղից մեր մի քանի բանասերները եզրակացնում են, որ Աբգարը տպարանական գործով զբաղվել է Հռոմում, և նույնիսկ տառերը ձուլված են այնտեղ, մինչդեռ Սաղմոսարանի հիշատակարանից պարզ երևում է, որ Աբգարը պապից միայն թույլտվություն է խնդրել հայերեն տառեր ձուլելու, և որ նրանք ձուլված են Վենետիկում. «Ի թուականիս հայոց Ռ. Ժ. Դ. ամին ես Թոխաթեցի Աբգար դպիրս խնդրեցի զայս նոր գիրս ի Հռոմ ի Պետրոս Պապէն և երետ հրաման շինելու... և եկեալ ի քաղաքն Վանատիկ ի Թագաւորութեան Երեւեմեն Թուճին և շինեցաք զայս նոր գիրս և զսա փոքր մեկնիչս սաղմոսացս»։ Մենք հենվելով Սուլթանշահի նամակին, որի մեջ Աբգարի Հռոմում եղած ժամանակ տպագրության գործով զբաղված լինելու մասին ոչ մի խոսք չի տրված, կարծում ենք տպագրիչը երկրորդ անգամ գնացած կլինի պապի մոտ։ Իսկ Աբգարի Պիոս պապին ներկայանալու պատկերը գծագրված է Վենետիկում նրա առաջին անգամ Հռոմից վերադառնալուց ամբողջ մեկ և կես տարի հետո, այդ երևում է պատկերի վրա պարզ երևացող թվականից՝ MDLXV 1565, իսկ սաղմոսի տպագրությունը (հիշատակարանին նայելով) վերջացել է 1566 թվի մայիսի 15-ին, այն ժամանակ, երբ Պիոս IV արդեն կես տարի առաջ մեռած էր (1565. նոյեմբ.)։ Պիոսի մահից հետո նրան հաջորդում է «մեծ ինկվիզիտոր» Գիսլիերին Պիոս V անունով։ Հավատաքննությունը նորից սաստկանում է, հոգու ճնշումը թագավորում. «Իտալիայից դարձյալ սկսում են փախչել ամենքը, որոնք զգում էին, թե չեն համապատասխանում անողոք պապի հայացքներին» (Լեո)։

Աբգար Թոքաթեցին, որ ըստ Օրմանյանի «շողոքորթ ընթացք» ուներ հանդեպ նախորդ պապի, նրան Պետրոս անվանելով, այլևս չի կարողանում նույն քաղաքականությունը բանացնել և չի կարող իր մտադրած «լուսավորչական հայ Եկեղեցական գրքեր լույս ընծայել հոն՝ զայս առանց ենթարկելու լատին կղերին գրաքննության, կը մտածե Պոլիս անցնել ազատ գործելու համար» («Տիպ ու Տառ»)։

(Շարունակելի)

Գ. ԼԵՎՈՆՅԱՆ
(Արվեստի վաստակավոր գործիչ)